

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունվարի 18-ի N 133 - Ն որոշման

«Հավելված N 6
ՀՀ կառավարության
2015 թվականի սեպտեմբերի
25-ի N 1141-Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԵԶՈՔԱՑՄԱՆԸ ԵՎ (ԿԱՄ)
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՌԻԴԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. Նախադպրոցական կրթություն					
Կոռուպցիոն ռիսկ	Խնդրի բովանդակություն	Ռիսկի չեզոքացմանը/ նվազեցմանն ուղղված միջոցառում	Միջոցառման իրականացման ժամանակա հատված	Միջոցառումն իրականացնող մարմին	Ֆինանսավորման աղբյուր
1.Կոռուպցիոն ռիսկեր երեխաներին մանկապարտեզ ընդունելու ժամանակ:	Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, երեխաներին մանկապարտեզ ընդունելու ժամանակ երբեմն առկա են լինում գումար պահանջելու, հովանավորչության	Բոլոր մանկապարտեզների նախասրահներում փակցնել տեղեկատվություն ընդունելության կանոնների, ինչպես նաև համայնքային թեժ գծերի վերաբերյալ:	30.12.2018թ.	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Մարզպետարաններ Քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքներ	Համայնքային բյուջե

	և նեպոտիզմի (միջնորդի միջոցով) դեպքեր: Այս երևույթը կանխարգելելու նպատակով Երևանի քաղաքապետարանը ժամանակավորապես ստեղծել է «Մանկապարտեզ-հերթագրում» էլեկտրոնային համակարգը, որը ավտոմատ կարգով է հերթագրում երեխաներին և ցույց է տալիս, որ երեխայի հերթը արդեն հասել է: Սակայն այս ծրագիրը առկա չէ մյուս քաղաքային համայնքներում:			(համաձայնությամբ) Մանկապարտեզներ (համաձայնությամբ)	
2. Կոռուպցիոն ռիսկեր մանկապարտեզների վարիչների, դաստիարակների աշխատանքի ընդունման գործընթացը պարունակում է	Մանկապարտեզների վարիչների, դաստիարակների աշխատանքի ընդունման գործընթացը պարունակում է	1. Աշխատանքի ընդունման միասնական չափանիշներ սահմանելու համար «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու միջոցով համապատասխան լիազորություն	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

	կոռուպցիոն ռիսկեր, քանի որ նրանք աշխատանքի են ընդունվում ոչ մրցութային եղանակով:	վերապահել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին: 2. Մշակել և ներդնել մանկապարտեզների վարիչների և դաստիարակների աշխատանքի ընդունման թափանցիկ և հրապարակային համակարգ, որը կներառի մրցութի կազմակերպման, նրա մասին իրազեկման, մրցութի իրականացման, վերահսկման և արդյունքների ամփոփման գործընթացը:	30.06.2018թ.	Մարզպետարաններ Քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքներ (համաձայնությամբ)	
3. Վարչական կոռուպցիա նախադպրոցական հաստատություններում:	Մանկապարտեզներում լինում են դրամահավաքության դեպքեր կենցաղային պարագաներ և գրենական պիտույքներ գնելու համար:	1. Մշակել մանկապարտեզների բյուջեների ձևավորման, կատարման, տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր մեթոդաբանություն և ներդնել բոլոր համայնքներում: 2. Մանկապարտեզների բյուջեներում նախատեսել անհրաժեշտ միջոցներ կենցաղային պարագաներ և գրենական պիտույքներ գնելու համար: 3. Մանկապարտեզների հաստատված բյուջեները, տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները հրապարակել տվյալ համայնքի պաշտոնական	31.08.2018թ. . 31.08.2018թ. 30.04.2018թ.	<< տարածքային կառավարման և զարգացման նախարարություն Երևանի քաղաքապետարան Քաղաքային համայնքներ (համաձայնությամբ) Մարզպետարաններ << կրթության և գիտության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

		կայքում: 4. Օրենդրությամբ նախատեսել անկանխիկ նվիրատվության հնարավորություններ (գույքի նվիրատվությունը պետք է ստանա պայմանագրային և հաշվապահական ձևակերպում), ապահովելով այդ գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Օրենքով արգելել կանխիկ դրամի շրջանառությունը, կարգապահական պատասխանատվություն նախատեսելով արգելքը խախտած մանկապարտեզների աշխատակիցների համար: 5. Յուրաքանչյուր եռամսյակ համայնքների կայքերում հրապարակել իրենց ենթակայության տակ գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների պատասխանատվության ենթարկված աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:	31.08.2018թ. 30.12.2018թ.		
4. Հակակոռուպցիոն դաստիարակության բացակայություն:	Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը հակակոռուպցիոն պայքարում կարելի է արմատական հաջողությունների	Նախադպրոցական հաստատություններում կազմակերպել տարիքին համապատասխան հակակոռուպցիոն բնույթի դասեր, հանդեսներ, խաղեր, բեմականացված ներկայացումներ, նկարչական մրցույթներ և այլն:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

	հասնել այն դեպքում, երբ հակակոռուպցիոն մտածելակերպն ու արժեքները ձևավորվում են մարդու վաղ հասակից: Մեզանում նախադպրոցական հաստատություններ ում այդ ուղղությամբ աշխատանքներ գրեթե չեն տարվում:			Քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքներ	
--	--	--	--	--	--

2. Հանրակրթության ոլորտ

5. Դպրոցներում կառավարման խորհուրդների գործունեության անարդյունավետություն:	Դպրոցների կառավարման խորհուրդների գործունեությունը հաճախ անարդյունավետ է և կրում է ձևական բնույթ:	Մշակել հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման հայեցակարգ՝ հստակեցնելով կառավարման խորհուրդների ձևավորման, գործառույթների սահմանման, տնօրենների ընտրության, նշանակման կարգերը և բացառելով շահերի բախումը:	31.06.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
6. Հանրակրթական հաստատությունները ենթարկվում են քաղաքական ուժերի ազդեցության,	Հանրակրթական դպրոցների ղեկուսների շահագործում որպես վարչական ղեկուս. քարոզարշավների,	Ընտրական օրենսգրքում և կրթության ոլորտը կանոնակարգող համապատասխան իրավական ակտերում ամրագրել դրույթներ, որոնք կարգել են դպրոցների ղեկավար անձնակազմին և ուսուցիչներին աշխատանքային ժամերին զբաղվել քաղաքական	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

հատկապես նախընտրական շրջանում:	ընտրական գործընթացների և տարբեր տոնակատարությունների ժամանակ դպրոցական անձնակազմը կամավոր-պարտադիր սկզբունքով ներգրավվում է:	քարոզչությամբ, կուսակցական գործունեությամբ, օգտագործել ուսումնական հաստատության տարածքը, գույքը, հեռախոսակապը, այլ ռեսուրսներն ի շահ կուսակցության:			
7. Շահերի բախում դասագրքերի կազման և հրատարակման գործընթացում:	Դասագրքերի մրցույթների կազմակերպման և իրականացման, պատվերների ձևավորման գործընթացներում առկա են շահերի բախման իրավիճակներ և կոռուպցիոն ռիսկեր:	1. Դասագրքերի մրցույթներին, դասագրքերի առարկայական գնահատման հանձնաժողովների աշխատանքներին արգելել որպես դասագրքերի հեղինակներ, խմբագիր կամ այլ ձևով դասագրքի ստեղծմանը մասնակցած/մշակող մասնագետների/ և նրանց հետ փոխկապակցված անձանց ներգրավումը: 2. Վերանայել դասագրքերին ներկայացվող պահանջները և գնահատման չափանիշները, մրցույթի և բողոքարկման գործընթացները դարձնելով առավել թափանցիկ: 3. Ստեղծել և ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատել ընթացակարգեր դասագրքերի պատվերների ձևավորման թափանցիկության համար՝ բացառելով մարզպետարանների և այլ մարմինների կողմից դպրոցի	30.06.2018թ. . 30.06.2018թ. . 30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

		ուսուցիչների և տնօրենների ուղղորդումները այս կամ այն դասագրքի տարբերակի ընտրության հարցում: Այդ նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարություն և Դասագրքերի շրջանառու հիմնադրամ հայտեր ներկայացնելու գործընթացում ներդնել ուղղակիորեն դպրոցների կողմից դասագրքերի հայտեր ներկայացնելու էլեկտրոնային համակարգ:			
8. Շահերի բախում և կոռուպցիոն ռիսկեր մանկավարժական աշխատողների աշխատանքի վարձատրության, մասնագիտական առաջխաղացման և այլ ոլորտներում:	Այս ոլորտները առավել հստակ կանոնակարգով ած չեն, ուստի նրանցում առկա են շահերի բախման դրսևորումներ և կոռուպցիոն ռիսկեր:	Մշակել և ներդնել հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների աշխատանքի վարձատրության, խրախուսման, վերապատրաստման, ատեստավորման և մասնագիտական առաջխաղացման նոր ընթացակարգեր՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը:	30.10.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀԿ-եր և Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում
9. Դպրոցներում կրկնուսուցման և դրամահավաքության դրսևորումներ:	1. Հանրակրթական դպրոցներում առկա են ուսումնական առաջադիմության կողմնակալ գնահատման, ներառյալ գնահատականների մտադրված ձևով	1. Մշակել ու ներդնել էթիկայի նորմեր դպրոցների վարչական և մանկավարժական կազմի համար, որոնք կներառեն դասավանդողի կողմից իր սովորողին վճարովի կրթական ծառայությունների մատուցումը /կրկնուսուցումը/ արգելող դրույթներ: 2. Օրենսդրությամբ նախատեսել	30.12.2018թ. 30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀԿ-եր և Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

	բարձրացման դեպքեր: Ուսուցիչների կողմից, այդ թվում տնօրենների թողտվությամբ, դպրոցում կամ դպրոցից դուրս վճարովի հիմունքներով կազմակերպվում և իրականացվում է ուսումնական պարտադիր ծրագրի կրկնուսուցում: Արդյունքում, տեղի է ունենում հանրակրթական դպրոցներում ուսումնական առաջադիմության կողմնակալ գնահատում՝ ինչպես ընթացիկ գնահատման, այնպես էլ ավարտական քննությունների ժամանակ՝ ի նպաստ այն աշակերտների, որոնք մասնակցել են լրացուցիչ արտադասարանակ ան պարապմունքներին:	անկանխիկ նվիրատվության հնարավորություններ (գույքի նվիրատվությունը պետք է ստանա պայմանագրային և հաշվապահական ծևակերպում), ապահովելով այդ գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: 3. Օրենսդրությամբ արգելել կանխիկ դրամի (այդ թվում աշխատավարձի) շրջանառությունը դպրոցներում, կարգապահական պատասխանատվություն նախատեսելով արգելքը խախտած աշխատակիցների համար: 4. Յուրաքանչյուր եռամսյակ դպրոցների կայքերում հրապարակել պատասխանատվության ենթարկված աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:	30.12.2018թ. 30.12.2018թ.	Դպրոցներ (համաձայնությամբ)	
--	---	--	---	---------------------------------------	--

	2. Որոշ դպրոցներում, այդ թվում նաև ծնողական խորհուրդների միջոցով, տարբեր առիթներով (ավարտական երեկո, սպորտ դահլիճի վերանորոգում, սպորտային գույքի ձեռք բերում և այլն) աշակերտներից դրամ հավաքելու պրակտիկա: Միշտ չէ, որ աշակերտներին և նրանց ծնողներին իրազեկում են, թե որքանով են արդյունավետ ծախսվել հավաքված միջոցները:				
10. Կրթության ոլորտը կարգավորող օրենքները չեն պարունակում էթիկայի նորմերին վերաբերող	Օրենսդրորեն սահմանված էթիկայի նորմերի բացակայությունը երբեմն հանգեցնում է մանկավարժների	Էթիկայի նորմերին վերաբերող դրույթներ ամրագրել «Կրթության մասին» ՀՀ օրենքում:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀԿ-եր և Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

[illegible]

		թափանցիկությունը՝ նախատեսելով դրանց տեղադրումը հաստատությունների կամ ՀՀ ԿԳՆ, Երևանի քաղաքապետարանի, համապատասխան մարզպետարանների կայքէջերում: 3. Նշված պահանջը խախտելու համար կիրառել կարգապահական պատասխանատվություն հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, ՀՀ ԿԳՆ, Երևանի քաղաքապետարանի, մարզպետարանների համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	
12. Ներառական կրթության ներդրման հնարավոր չարաշահումները:	Ներառական կրթության համակարգում առկա են ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ծախսման, թափանցիկության, կրթության որակի հետ կապված խնդիրներ (դպրոցները հարմարեցված չեն, մանկավարժական կազմը լիովին պատրաստ չէ, բավարար հաստիքներ չկան, հատկացվող	1. Մշակել դպրոցների կողմից մատուցվող ներառական կրթության վերահսկողության (այդ թվում հասարակական վերահսկողության) հստակ մեխանիզմներ, որոնք պետք է առնվազն ներառեն՝ 1) դպրոցներում մատուցվող ներառական կրթության որակը, 2) ներառական կրթություն իրականացնող դպրոցների կողմից պետական բյուջեից հատկացվող միջոցների օգտագործման արդյունավետությունը (անհրաժեշտ հաստիքներով համալրում, սննդի և տրանսպորտի համար հատկացվող բյուջետային և արտաբյուջետային միջոցներ և այլն):	31.06.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀԿ-եր և Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

	Ֆինանսական միջոցների ծախսման հետ կապված չարաշահումներ և այլն):	2. Մինչև 2014թ. օրենքի փոփոխությունը գնահատված և վկայագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատում/վերագնահատում գործող օրենքում սահմանված կարգով (այս առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկին կարգավորումների հիման վրա գնահատված երեխաների զգալի մաս գնահատվել են ներկայումս ուժը կորցրած ճանաչված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն, որով, ի թիվս այլ դեպքերի, ներառական կրթության ենթակա են համարվել նաև վարքային և հուզականային կամ հոգեբանական ոլորտի խանգարումներ ունեցող երեխաները, ինչը հստակ չափանիշների բացակայության պարագայում տեղիք է տվել գնահատման չարաշահումների՝ լրացուցիչ գումարներ ստանալու ակնկալիքով):	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	
13. Դպրոցներում հակակոռուպցիոն կրթությունը լիարժեք չէ:	Հասարակագիտության առարկայի 8-րդ դասարանի դասագրքերում կոռուպցիային վերաբերող նյութը պարունակում է ոչ ամբողջական	1. Մշակել «Հասարակագիտություն» առարկայի ուսուցման հայեցակարգային մոտեցումներ՝ ներառելով կոռուպցիայի վերաբերյալ թեմաների ուսումնասիրումը հիմնական և ավագ դպրոցներում, ներկայացնելով կոռուպցիայի սահմանումը, դրսևորումները, կոռուպցիան	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն Դպրոցներ, ՀԿ-եր և Միջազգային և հասարակական կազմակերպություններ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

	տեղեկատվություն և չի նպաստում երեխայի մոտ հակակոռուպցիոն մտածելակերպի ձևավորմանը:	առաջացնող պատճառները, կոռուպցիայի վնասակար հետևանքները (կոնկրետ օրինակներով), կառավարման համակարգի, տնտեսության, սոցիալական ապահովության համակարգի, մարդու իրավունքների հետ կոռուպցիայի փոխկապակցվածությունը, կոռուպցիայի դեմ պայքարի ազգային և միջազգային մեխանիզմները, հասարակության դերը կոռուպցիայի դեմ պայքարի գործում, անհատի կողմից մշտադիտարկում իրականացնելու, կոռուպցիոն ռիսկը ֆիքսելու և դրա հետ կապված քայլեր ձեռնարկելու (Fix Rate, Development Check¹) մեխանիզմները: 2. Հակակոռուպցիոն կրթության ամբողջականության ապահովման համար դպրոցներում պարբերաբար կազմակերպել հակակոռուպցիոն միջոցառումներ, շարադրություններ, մրցույթներ: 3. Մասնագիտական ՀԿ-երի օժանդակությամբ մանկավարժների համար կազմակերպել բարեխղճության (ինթեգրիթի) և հակակոռուպցիոն թեմաներով	30.12.2018թ. 30.12.2018թ.	(համաձայնությամբ)	Օրենքով չարգելված միջոցներ 35.100.000 դրամ Օրենքով չնախատեսված այլ (ոչ
--	--	---	---	--------------------------	--

¹ Նշված մեխանիզմները մշակվել են «Ինթեգրիթի Էկշն» միջազգային ոչ կառավարական կազմակերպության կողմից և հաջողությամբ գործարկվում են տարբեր երկրներում:

		դասընթացներ՝ անդրադառնալով սույն գործողության 1-ին կետում նշված թեմաներին:			բյուջետային) միջոցներ
14. Կրթության համակարգի աշխատակիցների ցածր վարձատրություն:	Ուսուցիչների աշխատավարձը կազմում է 40.000-120.000 ՀՀ դրամ: Որոշ դեպքերում ուսուցիչները ստիպված են լինում իրենց աշխատավարձից գումար ծախսել աշակերտների համար նյութեր տպագրելու, պատճենելու, քարտեզներ, միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ նյութեր գնելու վրա:	1. Մշակել դպրոցների ռացիոնալացման ծրագիր, դիտարկել աշակերտների փոքր քանակ ունեցող դպրոցների պահպանման նպատակա հարմարությունը: 2. Մշակել ուսուցիչների աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգ:	30.12.2018թ. 30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն Երևանի քաղաքապետարան Մարզպետարաններ	Պետական և համայնքային բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում
15. Դասահաճախման հետ կապված ռիսկեր:	Ավարտական դասարաններում աշակերտների բացակայություններ ի տարածվածությունը, ներառյալ բացակայող աշակերտներին ներկա նշանակելը և	1.Մշակել և ներդնել վերահսկման մեխանիզմներ, ավագ դպրոցներում սովորողների հաճախումների բարելավման համար:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	5.500.000 դրամ ֆինանսական միջոցների առկայության դեպքում

	ուսումնական առաջադիմություն գնահատելը:				
16. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կրթական ծրագրերի ընտրության և դրամաշնորհների տրամադրման կարգի բացակայություն:	Նման կարգի բացակայությունը հասարակության որոշ շրջանակներում կասկածանքի տակ է դնում կայացված որոշման օբյեկտիվությունը:	Մշակել և ներդնել ՀՀ պետական բյուջեից կրթությանը հատկացվող ֆինանսական միջոցներից, այդ թվում՝ պահուստային ֆոնդից, ֆինանսավորվող կրթական ծրագրերի (բացառությամբ պետական հանրակրթական դպրոցներին, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, բուհերին և գիտությանը հատկացվող պարտադիր տարեկան ֆինանսավորման) ընտրության, ինչպես նաև հասարակական կազմակերպություններին, հիմնադրամներին և այլ կառույցներին դրամաշնորհների և ծրագրային օժանդակության տրամադրման կարգ: Մշակել և ներդնել նաև նման ծրագրերի և դրամաշնորհների ֆինանսավորման վերաբերյալ որոշումների կայացման մասնակցային, թափանցիկ և հաշվետու համակարգ:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում
Բարձրագույն կրթության ոլորտ					
17. Բուհերում քաղաքական ազդեցության դիսկեր:	Բուհերի կառավարման խորհուրդները քաղաքականացված են:	«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքով փոփոխել բուհերի կառավարման խորհուրդների քանակական կազմը և համամասնությունը՝ նվազեցնելով հիմնադրի (գործադիր իշխանության) ներկայացվածությունը, միաժամանակ ավելացնելով բուհի ուղղվածության գործատուների թվաքանակը: Օրենքով ամրագրել քաղաքական	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

		պաշտոն գրադեցնող անձինք չեն կարող լինել խորհուրդի անդամ:			
18. Կոռուպցիոն ռիսկեր բուհերի դասախոսների աշխատանքի ընդունման, առաջխաղացման, գործուղումներ մեկնելու ժամանակ:	Պրոֆեսորադասախոսական և վարչական համակազմի աշխատանքի ընդունման, ազատման, առաջխաղացման, արտասահմանյան գործուղումներ մեկնելու գործընթացները իրականացվում են չարաշահումներով և հովանավորչությամբ, առկա է այդ գործընթացների թափանցիկության և հաշվետվողականության բարելավման անհրաժեշտություն:	Մշակել կամ վերանայել բուհերի համապատասխան ներքին իրավական ակտերը (կանոնակարգերը, աշխատակարգերը, ընթացակարգերը) պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմի աշխատանքի ընդունման, ազատման, առաջխաղացման, արտասահմանյան գործուղումներ մեկնելու գործընթացների վերաբերյալ:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ բուհեր (համաձայնությամբ)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում
19. Էթիկայի կանոնների բացակայություն բարձրագույն կրթության ոլորտում:	Բարձրագույն կրթության ոլորտում չկան սահմանված էթիկայի կանոններ, որոնք	Էթիկայի նորմեր ամրագրել «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքում, որոնք կանոնադաշտնան նաև շահերի բախմանը և քաղաքական զսպվածությանը բարձրագույն կրթության գործընթացի իրականացման ժամանակ:	30.11.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀԿ-եր և Միջազգային կազմակերպություններ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

	կանդիդատան նաև շահերի բախման, բարձրագույն կրթության իրականացման ժամանակ քաղաքական զսպվածության, չեզոքության և այլ հարցերի:			(համաձայնությամբ)	
20. Բուհերի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության նույնիսկ պակաս:	Բուհերը իրենց կայքէջերում չեն հրապարակում իրենց ռազմավարական ծրագրերը և նրանց գործողությունների իրականացման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը, էթիկայի կանոնները, կրթական ծրագրերը, ֆինանսական հաշվետվությունները և այլն:	«Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքով սահմանել տեղեկատվության այն շրջանակը (ռազմավարական ծրագիր և նրա գործողությունների իրականացման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, ֆինանսական հաշվետվություն և այլն), որը ցանկացած բուհ պարտավոր կլինի հրապարակել: Յուրաքանչյուր տարի մշտադիտարկել բուհերի կողմից այդ տեղեկատվության հրապարակումը:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն: ՀՀ բուհեր (համաձայնությամբ)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում
21. Կրթության ոլորտին	1. Բուհերի բյուջեների	1. «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսել բուհերի	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության	Լրացուցիչ ֆինանսավորում

հատկացվող ֆինանսական միջոցների բաշխման ու ծախսման, ոչ լիարժեք թափանցիկություն:	կառավարման, ինչպես նաև գնումների իրականացման գործընթացները թափանցիկ չեն և գոյություն չունի հանրային հաշվետվողականության հստակ մեխանիզմ, ինչը կարող է հանգեցնել ֆինանսական միջոցների անարդյունավետ ծախսի: 2.Չեն վերահսկվում ուսանողական խորհուրդների կատարված ծախսերը:	կողմից բյուջեի ծախսերի և գնումների վերաբերյալ հաշվետվությունների թափանցիկության ապահովում՝ տեղադրելով դրանք իրենց կայքէջերում: 2. «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսել դրույթ, որը կապահովի ուսանողական խորհուրդների ֆինանսական գործունեության հրապարակայնությունը:	30.12.2018թ.	նախարարություն ՀՀ բուհեր (համաձայնությամբ)	չի պահանջում
22.Հակակառույցիոն դասընթացների սակավություն:	Սահմանափակ թվով բուհերում են առկա հակակառույցիոն դասընթացներ, ինչը չի նպաստում ուսանողների մոտ հակակառույցիոն գիտելիքների և	ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների առարկայական ծրագրերում ընդգրկել կոռուպցիայի և դրա դեմ պայքարի վերաբերյալ դասախոսություններ:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀԿ-եր և Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

	արժեքների ծնավորմանը:				
23. Բարձրագույն կրթության ոլորտում ակադեմիական անազնվություն:	Բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում և կրթության մասնակիցների տարբեր խմբերի կողմից գրագողության տարածվածություն գրավոր ակադեմիական աշխատանքների նախապատրաստ ման ժամանակ: Լինում են դասախոսների կամ վարչական աշխատողների կողմից արդեն պաշտպանած մագիստրոսական թեզերի կամ դիպլոմային ավարտական աշխատանքների վաճառքի դեպքեր:	1. Ազգային գրադարանում սկսել Հայաստանում պաշտպանված բոլոր ատենախոսությունների, մագիստրոս սական թեզերի և դիպլոմային ավարտական աշխատանքների էլեկտրոնային բազայի ստեղծման աշխատանքները: Միասնական ցանցի միջոցով հնարավոր կլինի պարզել համանման աշխատանքներ առկա են, թե ոչ, ինչպես նաև այն, թե տվյալ աշխատանքում առկա են գրագողության դրսևորումներ, թե ոչ և եթե այո, ապա քանի տոկոս են դրանք կազմում: 2. Իրավական ակտով սահմանել էլեկտրոնային բազայի կառավարման, աշխատանքների էլեկտրոնային տարբերակների տրամադրման, բազայում նրանց ներառման, գիտական աշխատանքների էլեկտրոնային տարբերակների չտրամադրման դեպքում պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը, բազայից պարտադիր կարգով օգտվելու դեպքերը: 3. Բուհի ներքին իրավական ակտով սահմանել դիպլոմային ավարտական	30.12.2018թ. (Աշխատանք ների 20%-ը) 30.10.2018թ.	ՀՀ բուհեր (համաձայնությամբ) Ազգային գրադարան (համաձայնությամբ) ՀՀ բուհեր (համաձայնությամբ)	29.500.000 դրամ Օրենքով չնախատեսված այլ (ոչ բյուջետային) միջոցներ Լրացուցիչ

		աշխատանքների, մագիստրոսական թեզերի և ատենախոսությունների գրախոսության ներկայացման կարգը, որը կբացառի ուսանողի, ասպիրանտի կամ հայցորդի անմիջական շփումը գրախոսողի հետ՝ նախքան վերջինիս կողմից պաշտոնական կարծիքի ներկայացումը:	30.12.2018թ.		Ֆինանսավորում չի պահանջում
24. Կոռուպցիոն ռիսկեր բուհերում ընթացիկ քննությունների ժամանակ	Այն բուհերում, որոնցում ընթացիկ քննությունները ընդունվում են բանավոր եղանակով առկա են զգալի կոռուպցիոն ռիսկեր:	Բուհի ներքին իրավական ակտով սահմանել այն առարկաների ցանկը, որոնց ընթացիկ քննությունները իրականացվելու են գաղտնի գրավոր ընթացակարգով: Բուհի ռեկտորի հրամանով սահմանել գրավոր աշխատանքների գաղտնիության ապահովման, նրանց գնահատման, բողոքարկման և բողոքարկման արդյունքում գնահատականների վերանայման կարգը:	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ բուհեր (համաձայնությամբ)	ՀՀ բուհերի բյուջեներ, անհրաժեշտ են զուտ գրավոր քննությունների ձևաթղթերի տպագրական ծախսեր:
25. Դիպլոմների տրամադրման գործընթացում կոռուպցիոն ռիսկեր:	Առկա են ըստ էության բուհերում չսովորող ուսանողներին դիպլոմների տրամադրման դեպքեր:	1. Էլեկտրոնային համակարգի ստեղծում, որը շահագրգիռ անձին կամ կառույցին հնարավորություն կտա ստուգել, թե տվյալ դիպլոմը տրվել է հավատարմագրված բուհ-ի կողմից, թե ոչ: 2. Սահմանել սանկցիաներ նման խախտումներ թույլ տվող բուհ-րի նկատմամբ:	30.12.2018թ. (Աշխատանքների 20%-ը) 30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	20.000.000 Օրենքով չնախատեսված այլ (ոչ բյուջետային) միջոցներ Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում
3. Հետբուհական կրթության ոլորտ					
26. Կոռուպցիոն ռիսկեր գիտամանկավա	ՀՀ կառավարության 09.07.2001թ. N	Վերանայել նշված կարգը, սահմանելով, որ գործող հստակ չափանիշներին համապատասխանող	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

րժական կոչումների շնորհման համակարգում:	615 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգը» որոշ հատվածներում պարունակում է ոչ հստակ չափանիշներ: Կանոնակարգի վերանայման պարագայում պետք է հստակեցվեն քվեարկության անհրաժեշտությունը, նաև արվեստի բնագավառի մանկավարժական կադրերին կոչումներ շնորհելու չափանիշները՝ բացառելով երկակի մոտեցումները:	անձը ուղղակիորեն կարող է դիմել ԲՈՀ գիտական կոչում ստանալու համար:			
27. Կոռուպցիոն ռիսկեր ասպիրանտուրա ընդունելության	Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ասպիրանտուրա	Օրենքում նախատեսել ուսման ընթացքում բանակ զորակոչվելու պայմանները, հստակեցնելով զորակոչից տարկետման իրավունք ունեցող անձանց շրջանակը:	30.12.2018թ.	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ կրթության և գիտության	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

Ժամանակ:	հիմնականում ընդունվում են արական սեռի ներկայացուցիչները՝ զինվորական ծառայությունից խուսափելու համար:			նախարարություն	
28. Հետբուհական կրթության ոլորտում օրենսդրական և համակարգային բացթողումներ:	Սահմանված չեն չափորոշիչներ ասպիրանտական տեղերի հատկացման համար, ասպիրանտուրա ընդունելության տեղերը սահմանվում են ՀՀ ԿԳ նախարարի հրամանով: Սակայն բուհերին ատենախոսության թեմա հաստատելու իրավունքը տալիս է ԲՈՀ-ը: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ բուհը իրականացնում է ասպիրանտական	1. Սահմանել իրավական հիմքեր և հստակ չափանիշներ ասպիրանտական տեղերի հատկացման համար: Որպես չափանիշ դիտարկելով բուհի կարողությունը ընդունել մինիմում քննություններ, նշանակել գիտական ղեկավար, ձևավորել մասնագիտական խորհուրդ, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի առկայություն (լաբորատորիաների, լաբորատոր և այլ սարքավորումների, նյութերի առկայություն և այլն):	30.12.2018թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջում

	ղնդունելություն, բայց փաստացի ի վիճակի չէ իրականացնել կրթություն (չունի մինիմում քննություններ ղնդունելու, գիտական ղեկավար նշանա- կելու փաստացի հնարավորություն և մասնագիտական խորհուրդ): Նման դեպքերում, բուհերը սկսում են իրենց մոտ ծնական կերպով ծնակերպել այլ բուհերից գիտնականներ, որոնք, ըստ էության, առնչու- թյուն չունեն տվյալ բուհի հետ: Նման դեպքերում ասպիրանտը կամ հայցորդը վճարում է ուսման վարձ, մեկ այլ բուհում վճարում է				
--	--	--	--	--	--

	քննությունների համար, ինքնու րույն փնտրում է գիտական ղեկավար, անհրաժեշտությա ն դեպքում հոգում է արտերկրից իր պաշտպանության համար հրավիր վող գիտնա կանների ողջ ծախսերը:				
--	---	--	--	--	--

1. «Կրթության ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների» ծրագրի մոնիթորինգի և գնահատման ցուցանիշները ներկայացված է համաձայն Ձև 1-ի (կցված է):
2. «Կրթության ոլորտում հայտնաբերված կոռուպցիոն ռիսկերի և դրանց չեզոքացմանը և (կամ) նվազեցմանն ուղղված միջոցառումների» ծրագրի ֆինանսական գնահատականը ներկայացված է համաձայն Ձև 2-ի (կցված է):

1.
Նախադպրոցական կրթություն

Հ/Հ	Կոռուպցիոն ռիսկի անվանումը	Գործողության հերթական համարը	Գործողության անվանումը	Գործողության բնույթը	Գործողության տեսակարար կշիռը	Ցուցանիշի հերթական համարը	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի չափման միավորը	Ցուցանիշի բնույթը (1-քանակական, 2-որակական)	Ցուցանիշի փաստացի արժեքը	Ցուցանիշի թիրախային արժեքը	Ցուցանիշի կատարողականը	Գործողության միավորը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Կոռուպցիոն ռիսկեր երեխաներին մանկապարտեզ ընդունելու ժամանակ	1.1.	Բոլոր մանկապարտեզների նախասրահներում փակցնել տեղեկատվություն ընդունելության կանոնների, ինչպես նաև համայնքային թեժ գծերի վերաբերյալ:	քանակական /որակական	1	1.1.1.	Ընդունելության կանոնների վերաբերյալ պատրաստված տեղեկատվական պաստառների թիվը	հատ	1		508		
						1.1.2.	Փակցված պաստառների թիվը	հատ	1		508		
						1.1.3.	Պաստառները փակցված են տեսանելի վայրում		2		100		
						1.1.4.	Պաստառներում ներառված է պահանջվող տեղեկատվությունը		2		100		
						1.1.5.	Թեժ գծի վերաբերյալ տեղեկատվություն հրապարակված մանկապարտեզների թիվը	հատ	1		508		

						1.1.6.	Թեժ գծից օգտվող շահառուների թիվը	հատ	1		Մոտ 40.000 սաներ ի ծնողնե րի մոտ 20 տոկոս ը		
2.	2. Կոռուպցիոն ռիսկեր մանկապարտեզ ների վարիչների, դաստիարակնե րի աշխատանքի ընդունման գործընթացում	2.1.	Մշակել և ներդնել մանկապարտեզն երի վարիչների և դաստիարակներ ի աշխատանքի ընդունման թափանցիկ և հրապարակային համակարգ, որը կներառի մրցույթի կազմակերպման, նրա մասին իրազեկման, մրցույթի իրականացման, վերահսկման և արդյունքների ամփոփման գործընթացը:	քանակակա ն /որակական	0.7	2.1.1.	Մանկապարտե զների վարիչների և դաստիարակնե րի աշխատանքի ընդունման կարգի վերաբերյալ իրավական ակտի նախագծի մշակման տևողությունը	օր	1		90 օրվա ընթաց քում		
						2.1.2.	Նախագծի հանրային քննարկման մեջ գտնվելու տևողությունը	օր	1		50		
						2.1.3.	Նախագծի վերաբերյալ կազմակերպվա ծ քննարկումների թիվը	հատ	1		5		
						2.1.4.	Քննարկումների մասնակիցների թիվը	մարդ	1		15		
						2.1.5.	Նախագծում ամրագրված մրցույթի կազմակերպմա ն պահանջների համապատասխ անությունը ապահովված է		2		100		

						2.1.6.	Նախագծում ամրագրված մրցույթի վերաբերյալ իրազեկման պահանջների համապատասխ անությունը ապահովված է		2		100		
						2.1.7.	Նախագծում ամրագրված մրցույթի վերաբերյալ իրազեկման պահանջների համապատասխ անությունը ապահովված է		2		100		
						2.1.8.	Նախագծում ամրագրված մրցույթի վերաբերյալ իրազեկման պահանջների համապատասխ անությունը ապահովված է		2		100		
						2.1.9.	Նախագծում ամրագրված մրցույթի անցկացման թափանցիկությ ան պահանջի համապատասխ անությունը ապահովված է		2		100		
						2.1.10.	Նախագծում ամրագրված մրցույթի անցկացման ընթացքի վերահսկման պահանջի համապատասխ անությունը ապահովված է		2		100		

						2.1.11.	Նախագծում ամրագրված մրցույթի արդյունքների ամփոփման պահանջի համապատասխանությունը ապահովված է		2		100		
						2.1.12.	Իրավական ակտի ընդունման ժամկետի համապատասխանությունը սահմանված ժամկետին		2		100		
						2.2.1.	Աշխատանքի ընդունման միասնական չափանիշներ սահմանելու համար «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու միջոցով համապատասխան լիազորությունը կրթության պետական կառավարման լիազոր մարմնին վերապահելու մասին իրավական ակտի նախագծի մշակման տևողությունը	օր	1		120 օրվա ընթացքում		
		2.2.	Աշխատանքի ընդունման միասնական չափանիշներ սահմանելու համար «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու միջոցով համապատասխան լիազորություն վերապահել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին:	քանակական /որակական	0.3								

							Իրավական ակտի նախագծի նախագծի հանրային քննարկման մեջ գտնվելու տևողությունը	օր	1		50		
							Իրավական ակտի նախագծի վեաբերյալ կազմակերպվա ծ քննարկումների թիվը	հատ	1		3		
							Քննարկումների մասնակիցների թիվը	մարդ	1		15		
							Իրավական ակտի ընդունման ժամկետի համապատասխ անությունը սահմանված ժամկետին		2		100		
							Իրավական ակտով լիազոր մարմնին տրված լիազորությունն երի համապատասխ անությունը ապահովված է		2		100		

3.	Վարչական կոռուպցիան նախադրյալային հաստատություններում	3.1.	Մշակել մանկապարտեզների բյուջեների ձևավորման, կատարման, տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր մեթոդաբանություն և ներդնել բոլոր համայնքներում:	քանակական /որակական	0.4	3.1.1.	Մանկապարտեզների բյուջեների ձևավորման, կատարման, տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ընդհանուր մեթոդաբանության նախագծի մշակման ժամկետը	օր	1		90 օրվա ընթացքում		
						3.1.2.	Մեթոդաբանության նախագծի հանրային քննարկման մեջ գտնվելու տևողությունը	օր	1		50		
						3.1.3.	Մեթոդաբանության նախագծի վեաբերյալ կազմակերպված քննարկումների թիվը	հատ	1		5		
						3.1.4.	Քննարկումների մասնակիցների թիվը	մարդ	1		15		
						3.1.5.	Մեթոդաբանությունը ապահովում է մանկապարտեզների բյուջեների ձևավորման, կատարման, տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների ներկայացման թափանցիկությ		2		100		

							ունը և վերահսկելիությ ունը						
						3.1.6.	Մեթոդաբանությ յան ընդունման ժամկետը համապատասխ անում է սահմանված ժամկետին		2		100		
		3.2.	Մանկապարտեզն երի բյուջեներում նախատեսել անհրաժեշտ միջոցներ կենցաղային պարագաներ և գրենական պիտույքներ գնելու համար:	քանակակա ն	0.1	3.2.1.*	Կենցաղային պարագաներ և գրենական պիտույքներ գնելու համար բյուջեում գումարներ նախատեսած մանկապարտեզ ների թիվը	հատ	1		508		
						3.2.2.*	Մանկապարտե զների ընդհանուր թիվը		1		508		
						3.2.3.*	Նշված նպատակով նախատեսված միջոցների չափը	ՀՀ դրամ	1				
						3.3.4.*	Խնամվող երեխաների թիվը	երեխա			40.488		
						3.3.5.	Մեկ խնամվող երեխայի հաշվարկով բյուջեով	դրա/երե խա	1				

							նախատեսված ծախսի չափը						
						3.3.6.	Կենցաղային պարագաներ և գրենական պիտույքներ գնելու համար բյուջեում գումարներ նախատեսած մանկապարտեզ ների տեսակարար կշիռը մանկապարտեզ ների ընդհանուր թվում	%	1		100		
		3.3.	Մանկապարտեզն երի հաստատված բյուջեները, տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունն երը հրապարակել տվյալ համայնքի պաշտոնական կայքում:	քանակակա ն	0.2	3.3.1.*	Համայնքների պաշտոնական կայքերում եռամսյակային հաշվետվություն ներ հրապարակած մանկապարտեզ ների թիվը	հատ	1				
						3.3.2.*	Համայնքների պաշտոնական կայքերում տարեկան հաշվետվություն ներ հրապարակած մանկապարտեզ ների թիվը						
						3.3.3.*	Մանկապարտե զների թիվը	հատ	1				
						3.3.4.*	Համայնքների թիվը, որոնց ենթակայությամ բ գործում են մանկապարտեզ ներ	հատ					

						3.3.5.*	Հաշվետվություններ հրապարակած համայնքների թիվը						
						3.3.6.	Եռամսյակային հաշվետվություններ հրապարակած մանկապարտեզների տեսակարար կշիռը մանկապարտեզների ընդհանուր թվում	%			100		
						3.3.7.	Տարեկան հաշվետվություններ հրապարակած մանկապարտեզների տեսակարար կշիռը մանկապարտեզների ընդհանուր թվում	%			100		
						3.3.8.	Իրենց կայքերում հաշվետվություններ հրապարակած համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվում	%			100		
		3.4.	Օրենսդրությամբ նախատեսված անկանխիկ նվիրատվության հնարավորություն	քանակական /որակական	0.2	3.4.1.	Իրավական ակտի նախագծի մշակման ժամկետը	օր	1		70 օրվա ընթացքում		

			ններ (գույքի նվիրատվությունը պետք է ստանա պայմանագրային և հաշվապահական ձևակերպում), ապահովելով այդ գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Օրենքով արգելել կանխիկ դրամի շրջանառությունը , կարգապահական պատասխանատվություն նախատեսելով արգելքը խախտած մանկապարտեզների աշխատակիցների համար:			3.4.2. Իրավական ակտի նախագծի հանրային քննարկման մեջ գտնվելու տևողությունը	օր	1		50		
						3.4.3. Իրավական ակտի նախագծի վեաբերյալ կազմակերպված քննարկումների թիվը	հատ	1		3		
						3.4.4. Քննարկումների մասնակիցների թիվը	մարդ	1		15		
						3.4.5. Իրավական ակտը ապահովում է անկանխիկ նվիրատվությամբ ստացված գույքի պայմանագրային և հաշվապահական ձևակերպումը		2		100		
						3.4.6. Իրավական ակտը ապահովում է անկանխիկ նվիրատվությամբ ստացված գույքի ձևակերպման գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը		2		100		

						3.4.7.	Իրավական ակտը նախատեսում է կանխիկ դրամի շրջանառությունը մանկապարտեզներում		2		100		
						3.4.8.	Իրավական ակտով նախատեսված են համապատասխան պատիժների կանխիկ դրամի շրջանառության համար		2		100		
						3.4.9.	Իրավական ակտը ընդունվել է սահմանված ժամկետներում		2		100		
		3.5.	Յուրաքանչյուր եռամսյակ համայնքների կայքերում հրապարակել իրենց ենթակայության տակ գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների պատասխանատվության ենթարկված աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:	քանակական /որակական	0.1	3.5.1.	Կայքում հրապարակման համար համապատասխան հարթակի ձևավորման տևողությունը	օր	1		90 օրվա ընթացքում		
						3.5.2.	Ձևավորված հարթակի վերաբերյալ իրազեկման աշխատանքները կատարված են բավարար չափով		2		100		
						3.5.3.*	Պատասխանատվության ենթարկված աշխատակիցների թիվը	մարդ	1				
						3.5.4.*	Աշխատակիցների ընդհանուր թիվը	մարդ	1		8476		

						3.5.5.	Պատասխանատվության ենթարկված աշխատակիցների տեսակարար կշիռը աշխատակիցների ընդհանուր թվաքանակում	%	1				
4	Հակակոռուպցիոն դաստիարակության բացակայություն	4.1.	Նախադպրոցական հաստատություններում կազմակերպել, տարիքին համապատասխան, հակառուպցիոն բնույթի դասեր, խաղեր:	քանակական /որակական	1	4.1.1.	Մեթոդական ուղեցույցի նախագծերի մշակման տևողությունը	օր	1		90 օրվա ընթացքում		
						4.1.2.	Մեթոդական ուղեցույցերի թիվը	հատ	1		508		
						4.1.4.	Հաստատված մեթոդական ուղեցույցերի տեսակարար կշիռը նախատեսված մեթոդական ուղեցույցերի ընդհանուր թվում	%	1		100		
						4.1.5.	Մեթոդական ուղեցույցերի վերաբերյալ իրազեկված մանկապարտեզների թիվը	հատ	1		508		
						4.1.6.	Իրազեկված մանկապարտեզների տեսակարար կշիռը մանկապարտեզների ընդհանուր թվում	%	1		100		

						4.1.7.	Կազմակերպված միջոցառումների թիվը	հատ	1		508		
						4.1.8.*	Միջոցառումներում ընդգրկված երեխաների թիվը	մարդ	1		40488		
						4.1.9.	Միջոցառումներում ընդգրկված երեխաների տեսակարար կշիռը երեխաների ընդհանուր թվում	%	1		70		
						4.1.10.	Մեթոդական ուղեցույցերի համապատասխանությունը ներկայացվող պահանջներին		2		100		

Ծանոթություն. 1. * նշանով նշված ցուցանիշների համար չեն սահմանվում թիրախային արժեքներ և այդ ցուցանիշները չեն մասնակցում գործողության միավորի գնահատմանը, 2. Ժամկետային ցուցանիշների համար, որոնց չափման միավոր հանդիսանում է օրը, թիրախային և փաստացի արժեքները հաշվարկվում են սկսած որոշակի նախորոք սահմանված ժամկետից

2. Հանրակրթության ոլորտ

Հ/Հ	Կոռուպցիոն ռիսկի անվանումը	Գործողության հերթական համարը	Գործողության անվանումը	Գործողության բնույթը	Գործողության տեսակարար կշիռը	Ցուցանիշի հերթական համարը	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի չափման միավորը	Ցուցանիշի բնույթը (1-քանակական, 2-որակական)	Ցուցանիշի փաստացի արժեքը	Ցուցանիշի թիրախային արժեքը	Ցուցանիշի կատարողականը	Գործողության միավորը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14

1	Դպրոցներում կառավարման խորհուրդների գործունեության անարդյունավետություն	1.1.	Մշակել հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման հայեցակարգ՝ հստակեցնելով կառավարման խորհուրդների ձևավորման, գործառնությունների սահմանման, տնօրենների ընտրության, նշանակման կարգերը և բացառելով շահերի բախումը:	քանակական /որակական	1	1.1.1.	հայեցակարգի նախագծի մշակման տևողությունը	օր	1		120 օրվա ընթացքում		
						1.1.2.	հայեցակարգի քննարկումների տևողությունը	օր	1		50		
						1.1.3.	հայեցակարգի վերաբերյալ անցկացված քննարկումների թիվը	հատ	1		5		
						1.1.4.	քննարկումների ն մասնակցած անձանց թիվը	մարդ	1		15		
						1.1.5.	հայեցակարգն ապահովում է կառավարման խորհուրդների ձևավորման գործառնությունների հստակությունը		2		100		
						1.1.6.	հայեցակարգն ապահովում է տնօրենների ընտրության և նշանակման թափանցիկությունը		2		100		
						1.1.7.	հայեցակարգն ապահովում է շահերի բախման բացառումը		2		100		
						1.1.8.	հայեցակարգի ընդունման ժամկետը համապատասխանում է սահմանված ժամկետին		2		100		
2	Հանրակրթական հաստատությունները	2.1.	Ընտրական օրենսգրքում և կրթության ոլորտը կանոնակարգող	քանակական /որակական	1	2.1.1.	մշակման համար նախատեսված իրավական	հատ	1		5		

	ենթարկվում են քաղաքական ուժերի ազդեցության, հատկապես նախընտրական շրջանում		համապատասխան իրավական ակտերում ամրագրել, դրույթներ սահմանելով պատժամիջոցներ, որոնք կարգելեն դպրոցների ղեկավար անձնակազմին և ուսուցիչներին աշխատանքային ժամերին զբաղվել քաղաքական քարոզչությամբ, կուսակցական գործունեությամբ, օգտագործել ուսումնական հաստատության տարածքը, գույքը, հեռախոսակապը, այլ ռեսուրսներն ի շահ կուսակցության:				ակտերի թիվը						
						2.1.2.	համապատասխան իրավական ակտերի նախագծերի մշակման ժամկետը, այդ թվում	օր	1		120 օրվա ընթացքում		
						ա	իրավական ակտ 1	օր	1		60		
						բ	իրավական ակտ 2	օր	1		60		
								օր	1		60		
						2.1.3.	իրավական ակտերի քննարկումների տևողությունը	օր	1		40		
						2.1.4.	իրավական ակտերի վերաբերյալ անցկացված քննարկումների թիվը	հատ	1		5		
						2.1.5.	քննարկումների ն մասնակցած անձանց թիվը	մարդ	1		15		
						2.1.6.	իրավական ակտերի նախագծերի համապատասխանությունը գործողության պահանջներին		2		100		
						2.1.7.	իրավական ակտի		2		100		

							ընդունման ժամկետների համապատասխ անությունը սահմանված ժամկետին						
3	Շահերի բախում դասագրքերի կազման և հրատարակմա ն գործընթացում	3.1.	Դասագրքերի մրցույթներին, դասագրքերի առարկայական գնահատման հանձնաժողովների աշխատանքներին արգելել որպես դասագրքերի հեղինակներ, խմբագիր կամ այլ ձևով դասագրքի ստեղծմանը մասնակցած/մշակո ղ մասնագետների/ և նրանց հետ փոխկապակցված անձանց ներգրավումը:	քանակակ ան /որակակա ն	0.4	3.1.1.	դասագրքերի պատրաստման և հրատարակմա ն մրցույթի անցկացման նոր կարգի նախագծի մշկման տևողությունը	օր	1		60 օրվա ընթաց քում		
						3.1.2.	նախագիծը քննարկման մեջ գտնվելու տևողությունը	օր	1		50		
						3.1.3.	նախագծի վերաբերյալ անցկացված քննարկումների թիվը	հատ	1		3		
						3.1.4.	քննարկումների ն մասնակցած մասնագետների թիվը	մարդ	1		10		
						3.1.5.	նախագիծը բացառում է դասագրքի ստեղծմանը մասնակցած անձանց, որպես մրցույթի կազմակերպիչն եր հանդես գալը		2		100		
